Զինապարտ տարիքի քրդերը զինուորական պարտականութիւն կը կատարեն իրենց մասերում, իսկ պատերազմի դէպքում կը կազմուեն նոր մասեր էլ (երկրորդ և երրորդ հերթի գնդեր ու գումարտակներ), որոնց մի մասը կը յատկացուի ռազմաճակատին, միւսները կը մնան Ղարաբաղում:

Քրդական զօրամասերի կազմակերպութիւնը հանդամանօրէն մշակելու համար անհրաժեշտ է առ այժմ պարզել, թէ որքան հետևակ ու ձիաւոր մարտիկներ կարող են տալ քրդերը: Հաղորդելով ձեզ այս մասին՝ խնդրում եմ ձերդ գերազանցութեան՝ յայտնել ձեր կարծիքը և հաղորդել խնդրւած թւերը»:

Այս նամակը կատարեալ յստակութեամբ պարզում է, թէ ի՞նչ ուղղութեամբ էր զարգանում Ազրբէջանեան պետական միտքը, որի համար թիւրքական «համիդիէ» գնդերը համարւում էին իդէալ: Ցոյց է տալիս նաև, որ ազրբէջանցիների համար հերթի էր դրւում Զանգեզուրի կցումը, որպէս դի Սամուրից մինչև Արաքս հաստատուի Ազրբէջանի իշխանութիւնը:

Զանգեզուրը, ցարական իշխանութեան օրով, կազմում էր Ելիսաւետպոլի (Գանձակի) նահանգի մէկ գաւառը՝ Ղարաբաղի ու Պարսկաստանի միջև՝ արևմուտքից ունենալով Նախիջևանն ու Դարալագեազը, իսկ արևելքից Կարեազինի գաւառը: Զանգեզուրի գաւառը բռնում էր 6743 քառ.վերստ տարածութիւն և 1916 թ. ունէր 226,398 բնակիչ, որից հայ՝ 95,054, թուրք շիա՝ 110,637, թուրք սիւննի՝ 8,966, քիւրդ՝ 3,638, ռուս՝ 1,709 և այլն*):

Զանգեզուրի վարչական սահմաններն էլ արհեստական կերպով գծւած էին այնպէս, որ ո՛չ մի ժողովուրդ նրա մէջ զգալի մեծամասնութիւն չէր կազմում: Ըստ հայկական վարչական վերաբաժանման ծրագրի Զանգեզուրից պէտք է զատուէին մի շարք գուտ թրքաբնակ շրջաններ ու կցուէին Կարեազինի թրքական գաւառին, որով Զանգեզուրը կը դառնար հայ մեծամասնութիւն ունեցող (65 %) մի գաւառ՝ 136 հազար բնակչութեամբ, որից 88 հազարը հայ, 46ը թուրք և 2ը՝ ուրիշ ազգութիւններ:

Ռուսական յեղափոխութեան լուրը Զանգեզուրում էլ առաջ բերեց ընդհանուր ոգևորութիւն: Հետզհետէ ամէն կողմ կազմուեցին յեղափոխական կոմիտէներ՝ փոխարինելու համար հին իշխանութեանը: Դէպքերի բերումով՝ գաւառը կտրուեց նահանգական կենտրոն Գանձակից և իր գործերը վարում էր ինքը՝ Գորիսի ու Հանքերի խառն կոմիտէների միջոցով: Այստեղ էլ հայերն ու թուրքերը սկզբի շրջանում ապրում էին հաշտ ու համերաշխ:

Մարտի սկզբներին Ղարաբաղն ու Զանգեզուրը միացուեցին և կազմուեց Գանձակից անկախ մի առանձին շրջան՝ Շրջանային Գործադիր կոմիտէի գլխաւորութեամբ: Այս վերջինի ջանքերով կազմուեց Գորիսի գործադիր կոմիտէ, որին ենթարկւում էին բուն Զանգեզուրն ու Սիսեանը, իսկ Ղափան—Մեղրիի շրջանը մնաց Հանքերի կոմիտէի իշխանութեան տակ:

---

*) Այս գլուխը կազմելիս աղբիւր եմ ունեցել՝ «Кавказскій Календарь», 1917 г.», А. Шахатунянъ. «Административный передѣлъ Закавказскаго Края». 1917. Тифлисъ.

Այլև լայնօրէն օգտուել եմ զանգեզուրցի ծանօթ գործիչ Ց. Տէրունիի «Կառավարական Օրգանները Զանգեզուրում» ձեռագիր աշխատութիւնից ու Հ. Հ. Պատիրակութեան դիւանի նիւթերից: